



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

Երևան, 15 դեկտեմբերի, 2014

Կարծիք ԻՊԱՍ(2014)ՀԿՕ01/12

Կարծիք
«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի
կապակցությամբ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
0002 Երևան, ՀՀ, Ամիրյան 11
+374 10 505303
info@prwb.am

Սույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Կարծիք ԻՊԱՍ(2014)ՀԿՕ01/12 հղումը



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ծանոթություն.....	3
II. Նախապատմություն	4
III. Հասարակական կազմակերպությունների գործունեությունը միջազգային ստանդարտների ներքո.....	7
IV. Հասարակական կազմակերպությունների գործունեության թույլատրելի սահմանափակումները և միջամտության աստիճանը.....	8
V. Կազմակերպության գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը.....	9
VI. Հասարակական կազմակերպությունների գործունեության վերահսկողության մեխանիզմները և ծավալները ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում.....	13
VII. Եզրակացություններ	17



I. Ծանոթություն

Սույն կարծիքը ներկայացվում է 2014 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում տեղադրված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ¹:

Սույն կարծիքի շրջանակներում գնահատվել են մասնավորապես օրենքի նախագծի 13-րդ, 17-րդ, 23-րդ, 25-րդ, 26-րդ և 30-րդ հոդվածների (ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքը վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն ել լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության օրենքը «Ինտերնետով հրապարակային ել անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին) կարգավորումները հասարակական կազմակերպությունների գործունեությանը վերաբերելի միջազգային ստանդարտների և սկզբունքների համակցությամբ:

Ներկայացված եզրակացությունը հիմնվում է այն հետևյալ հարցադրումներին տրված պատասխանների վրա՝

- Արդյո՞ք օրենքի փոփոխություններով սահմանվող կարգավորումները համահունչ են միավորումների ազատության իրավունքի իրացման հետ,
- արդյո՞ք սահմանված միջամտությունն անհրաժեշտ է և անհամաչափ սահմանափակում չի նախատեսում հասարակական կազմակերպությունների գործունեության համար
- և չի հանգեցնում պետության կողմից խտրական վերաբերմունքի:

¹ Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի նախագիծ, <http://www.moj.am/legal/view/article/713>



II. Նախապատմություն

2014 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել է “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Օրենք):

Նույն Օրենքի նախագծի հետ ներկայացվել են նաև համապատասխան փոփոխություններ ակնկալող այլ օրենքների փոփոխությունների նախագծերը և դրանց հիմնավորումները:

Օրենքի նախագծի 13-րդ հոդվածը սահմանում է կազմակերպության պարտադիր կառուցվածքը, կանոնադրությանն առաջադրվող պահանջները և այդ շրջանակներում նաև կառավարման կարգը, մասնավորապես՝

Կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որում ամրագրվում է Կազմակերպության.

“...4) բարձրագույն մարմինը՝ ժողով, համաժողով, վեհաժողով, համագումար և այլն (այսուհետ ժողով), նրա գումարման կարգը, ժամկետները և այն լիազորությունները, որոնք օրենքով ուղղակիորեն սահմանված չեն...”

6) ժողովի և գործադիր մարմնի կազմը և լիազորությունները...”:

Նույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանվում են հասարակական կազմակերպությունների պարտականությունները, մասնավորապես հասարակական կազմակերպությունները պարտավորվում են.

“...1) վարել իր անդամների (անդամություն ունեցող Կազմակերպության դեպքում) և կամավորների հաշվառումը.

2) սույն օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված կարգով հրապարակել հաշվետվություն.

3) սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.

4) իր պաշտոնական կայքի հասցեի վերաբերյալ ծանուցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը (այսուհետ՝ Լիազոր մարմին).

5) սույն օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Լիազոր մարմնի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել նրա ներկայացուցիչներին՝ ներկա գտնվելու ժողովին կամ իր կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին...”:

Նույն Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝

“1. Յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը ոչ ուշ քան Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

(<http://www.azdarar.am>) պարտավոր է հրապարակել գործունեության վերաբերյալ հաշվետվություն, որը պարունակում է՝

- 1) տարեկան մուտքերի (այդ թվում՝ մասնակիցների (անդամների) վճարումներից (անդամավճարներից) և Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված) ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը.
- 2) իրականացրած ծրագրերի անվանումներն ու վայրերը.
- 3) ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը (աուդիտի ենթարկվելու դեպքում), եթե Կազմակերպության մուտքերի արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը.
- 4) մասնակիցների (անդամների), ինչպես նաև կամավորների թիվը (հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ).
- 5) կառավարման մարմիններում և Կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնները, անուններն ու ազգանունները.
- 6) Ժողովի և կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերի քանակը (նախորդ տարում).
- 7) գտնվելու վայրը:

2. Եթե Կազմակերպությունն ունի պաշտոնական ինտերնետային կայք, ապա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվետվությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, հրապարակում է նաև այդ կայքում...”:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

“1. Եթե Կազմակերպության տարեկան շրջանառությունը հաշվետու տարում գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններին ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված անկախ աուդիտորի կողմից:

2. Անկախ աուդիտորի եզրակացությունը հրապարակվում է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով”:

Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

“...2. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվետվությունը սահմանված ժամկետում չհրապարակելու կամ թերի հրապարակելու դեպքում Լիազոր մարմինը Կազմակերպության գործադիր մարմնին է ուղարկում գրավոր տեղեկություններ:

3. Եթե նախազգուշացվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կազմակերպության գործադիր մարմինը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Լիազոր մարմնի պահանջը, ապա Լիազոր մարմինը կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցները”:



Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

“1. Լիազոր մարմինը կարող է Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջով դիմել դատարան, եթե՝

1) Կազմակերպությունը թույլ է տվել օրենքի երկու կամ ավելի կամ կոպիտ խախտումներ, կամ մեկ տարվա ընթացքում առնվազն երեք անգամ իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն...”

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով կոպիտ խախտում է համարվում՝

“...2) սույն օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաշվետվության հրապարակման պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը...”

3) Գործակալության պետական միասնական գրանցամատյանում արձանագրված տեղեկությունների անհամապատասխանությունն օրենքին կամ Կազմակերպության այլ փաստաթղթերին”:

Հայաստանի Հանրապետության օրենքը վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եվ լրացում կատարելու մասին օրենքի համաձայն՝

«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվետվությունը հրապարակելու պահանջը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից նախագգուշացվելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության նախագգուշացման պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում հասարակական կազմակերպության իրավասու պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հայաստանի Հանրապետության օրենքը «Ինտերնետով հրապարակային եվ անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

«3. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ

հոդվածի՝ 1) 1-ին մասով նախատեսված հաշվետվության հրապարակման համար վճարի չափը չի կարող գերազանցել 5000 ՀՀ դրամը.

2) 3-րդ մասով նախատեսված հաշվետվության հրապարակման համար վճարի չափը չի կարող գերազանցել 2000 ՀՀ դրամը»:



Օրենքի նախագծին կից ներկայացված է նաև Հիմնավորումներ, որտեղ թվարկվում են գործող խնդիրները և դրանց առաջընթաց լուծումները 1-21 կետերով: Այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունների ընդհանուր և ֆինանսական գործունեության նկատմամբ լրացուցիչ վերահսկողական մեխանիզմներ սահմանող դրույթների վերաբերյալ հիմնավորումները բացակայում են:

III. Հասարակական կազմակերպությունների գործունեությունը միջազգային ստանդարտների ներքո

1. Հասարակական կազմակերպությունների գործունեությունը դիտարկվում է միավորումների ազատության իրավունքի շրջանակներում: Այս իրավունքն էական նշանակություն ունի ժողովրդավարական արժեքների արդյունավետ իրականացման համար²: Այն անհատներին օժտում է իրենց շահերը համատեղ պաշտպանելու համար միավորվելու ազատությամբ:
2. Միավորումների ազատության իրավունքի պաշտպանությունն ամրագրված է ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագրում³, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական Կոնվենցիայում⁴: Այն մոտեցումները, որով ներպետական օրենսդրությունն ամրագրում է այս իրավունքի պաշտպանության և իրացման մեխանիզմները (իրավունքի պաշտպանության աստիճանը) տվյալ երկրում ժողովրդավարության վիճակի լավագույն ցուցիչներն են⁵:
3. Եվրոպայի Խորհուրդը Նախարարների Կոմիտեն նշում է, որ հասարակական կազմակերպությունների գործունեությունն ու ներդրումն անգնահատելի է⁶ մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության զարգացման գործում:
4. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնակատարն արձանագրում է, որ միավորումների ազատությունը ենթադրում է ոչ միայն ձևավորելու կամ հիմնելու միավորումներ, այլ նաև երաշխավորում է միավորման կանոնադրական նպատակներին ուղղված գործողությունների

² Draft Opinion on the compatibility of Article 193-1 of the Criminal Code vis-à-vis the rights of non-registered associations of the Republic of Belarus, Opinion no. 633/2011, CDL(2011)088

³ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշնագիր, Հոդված 22, Միացյալ Ազգերի Կազմակերպության

⁴ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիա, Հոդված 11, Եվրոպայի Խորհուրդ

⁵ Compilation of Venice Commission opinions concerning freedom of Association (revised July 2014), CDL-PI(2014)004

⁶ CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Նախաբան:



իրականացման ազատություն⁷: Սա ենթադրում է ինքնուրույնություն և առանց միջամտության որոշումների կայացման և ներքին կառավարման գործընթաց:

IV. Հասարակական կազմակերպությունների գործունեության թուլատրելի սահմանափակումները և միջամտության աստիճանը

Միավորումների ազատության, այդ թվում նաև հասարակական կազմակերպությունների գործունեության արդարացված սահմանափակումների և միջամտության համար պետք է համակցությամբ բավարարվեն հետևյալ պայմանները. ա) այն պետք է նախատեսված լինի օրենքով, բ) պետք է հետապնդի իրավաչափ նպատակներ, որոնց թվում՝ իշահ պետական և հասարակական անվտանգության, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, գ) պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը՝⁸:

Ընդ որում, Եվրոպական դատարանը սահմանում է նաև “սուր սոցիալական պահանջի” հիմքով այդ իրավունքի միջամտության/սահմանափակման հավանականությունը: Սա ենթադրում է, որ պետության կողմից պետք է ներկայացվեն հնարավոր ապացույցներ այն մասին, որ միավորման գործունեությունը լուրջ սպառնալիք է ներկայացնում պետության համար և անհամատեղելի է “ժողովրդավարական հասարակության” հետ⁹:

5. Միավորումների ազատության սահմանափակման/միջամտության համար ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորումների առկայությունը դեռևս բավարար չէ: Պետությունը պետք է ցույց տա, որ այդ սահմանափակումը/միջամտությունն անհրաժեշտ է կանխելու իրական և ոչ թե ենթադրյալ վտանգը, և որ առկա այլ միջոցները բավարար չեն վտանգի կանխարգելման համար¹⁰ : Նման կերպ սահմանափակումը/միջամտությունը պետք է լինի համաչափ, ինչը ենթադրում է համապատասխան գործոնների և հիմքերի առկայություն, ինչպիսիք են.

- Այն իրավունքի բնույթը, որի պաշտպանության նպատակով իրականացվում է միջամտությունը/սահմանափակումը,
- պաշտպանության նպատակը,
- ներկայացվող միջամտության/սահմանափակման բնույթն ու նպատակը,

⁷ CCPR/C/90/D/1296/2004, par. 7.2, UN Human Rights Committee, Ninetieth Session 9-27 July 2007, <http://spring96.org/en/news/17880>

⁸ CCPR/C/90/D/1296/2004, UN Human Rights Committee, Ninetieth Session 9-27 July 2007,

<http://spring96.org/en/news/17880>

⁹ Case of Refan Partisi (The Welfare Party) and others v. Turkey, Application no. 41340/98, 41343/98, 41344/98, 13 February 2007, Կետ 104

¹⁰ [CCPR/C/90/D/1296/2004, UN Human Rights Committee, Ninetieth Session 9-27 July 2007.](http://spring96.org/en/news/17880) կետ 7.3



- սահմանափակման բնույթի և նպատակի համարժեքությունը¹¹:

6. Վենետիկի հանձնաժողովը սահմանել է միավորումների գործունեության սահմանափակման/միջամտության արդարացիության թեստ, որի համաձայն՝ յուրաքանչյուր սահմանափակում պետք է համապատասխանի Եվրոպական Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին: Մասնավորապես՝ 1) Պետք է սահմանված լինի օրենքով, և սահմանափակում պարունակող կանոնի ազդեցությունը տարածվի ընդհանուրի վրա, 2) սահմանափակումները պետք է բավարար չափով տարածված լինեն և հստակ, 3) սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը¹²:

V. Կազմակերպության գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը

7. Միջազգային ստանդարտների ներքո ընդունելի է, որ հասարակական կազմակերպության գործունեության համար սահմանվեն իրավական կանոնակարգման և վերահսկողության մեխանիզմներ: Այնուամենայնիվ, պետք է ապահովեն նաև հասարակական կազմակերպության գործունեության անհարկի միջամտությունից պաշտպանելու երաշխիքները: Եվրոպայի խորհրդի անդամ երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարբերական վերահսկողության և հաշվետվողականության պահանջին ենթակա է միայն հասարակական կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը և ոչ թե ներքին կառավարման մարմինների գործունեությունը: Մասնավորապես՝ կազմակերպությունները հարկային օրենսդրությանը համապատասխան ներկայացնում են ֆինանսական ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ, սակայն անընդունելի է կազմակերպության ներքին կառավարման մարմինների գործունեության միջամտությունը կամ վերջիններիս կողմից կայացված որոշումների պարտադիր ներկայացման պահանջը, քանի դեռ առկա չէ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ հավաստի տեղեկատվություն:

Թեև կառավարման համար իրավական օրենսդրական ձևական պահանջների և կանոնների սահմանումն ընդունելի է, այնուամենայնիվ, այդ պահանջների սահմանումը չպետք է հանգեցնի

¹¹ Compilation of Venice Commission opinions Concerning Freedom of Association (revised on 27 November 2013), CDL(2013)035, [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2013\)035-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2013)035-e), կետ 5.2.2., էջ 12

¹² Compilation of Venice Commission opinions Concerning Freedom of Association (revised on 27 November 2013), CDL(2013)035, [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2013\)035-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2013)035-e), կետ 5.2.2.



հասարակական կազմակերպությունների գործունեության անհարկի և անհամաչափ միջամտության:

8. Ընդունելի է, որ ընդհանուր քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես մնացած իրավաբանական անձանց, այնպես էլ հասարակական կազմակերպությունների համար օրենքը սահմանի կառավարման ընդհանուր սկզբունքները: Մասնավորապես՝ կառավարման մարմնի հնարավոր տեսակները, կառավարման մարմնի հնարավոր իրավասությունների շրջանակը: Այս շրջանակներում, թեև անդամների և կամավորների հաշվառում իրականացնելու օրենսդրական կարգավորումը կարող է ընդունելի համարվել, այնուամենայնիվ, անդամների վերաբերյալ պարտադիր հաշվետվությունների հրապարակման պահանջն արդեն կարող է ոչ իրավաչափ միջամտության հանգեցնել: Երրորդ կողմի միջամտությունը կազմակերպության փաստացի գործունեությանը պետք է խիստ հազվադեպ լինի և պետք է ուղղված լինի լուրջ խախտումների վերացմանը¹³: Սա ենթադրում է, որ անդամների վերաբերյալ հաշվետվությունները կարող են պահանջվել ըստ անհրաժեշտության:
9. Կազմակերպությունները պետք է հետևեն, որ իրենց կառավարման և որոշում կայացնող մարմինների գործունեությունը համապատասխանի իրենց Կանոնադրությանը: Այնուամենայնիվ, կազմակերպությունն ինքնուրույն է որոշում կայացնում կառավարման և որոշում կայացնող մարմինների փոփոխության համար և չպետք է լիազորություն ստանան¹⁴:
10. Ավելին՝ հասարակական կազմակերպությունները պետք է օժտված լինեն ինքնակառավարման լիազորություններով և պետք է ազատ լինեն հանրային կառավարման մարմինների ուղղորդումներից, որպեսզի կարողանան պահպանել “ոչ կառավարական” կազմակերպության գործունեության բնույթը: Սա նշանակում է, որ կազմակերպությունները պետք է ազատ լինեն ոչ միայն կազմակերպություն հիմնադրելու վերաբերյալ որոշում կայացնելիս, այլ նաև **ինքնուրույնաբար ընտրեն կառավարման իրենց համապատասխան մոդելը և կառավարումն իրականացնեն առանց երրորդ կողմի միջամտության**¹⁵: Այս պահանջը ենթադրում է, որ կազմակերպության կողմից որոշումների կայացման գործընթացը պետք է համապատասխանի կազմակերպության իրավական կարգավիճակին, և պետության կողմից չպետք է պարտադրանք ներկայացվի վերջիններիս, թե ինչպես կարելի է լավագույնս հասնել իրենց առջև դրված խնդիրների իրականացմանը:

¹³ Բացատրական գեկուցագիր CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Պարագրաֆ 70, կետ 125:

¹⁴ CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Հոդված 47

¹⁵ Բացատրական գեկուցագիր CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Պարագրաֆ 6, կետ 28



11. Կառավարման մարմինների գործունեության, դրանց կապակցությամբ իրականացված փոփոխությունների համար արտաքին մարմինների վերահսկողության կամ հաստատման պահանջ չպետք է գործի¹⁶:
12. Մահմանված սկզբունքի համաձայն՝ հանրային ֆինանսական աջակցություն ¹⁷ ստացած կազմակերպությունները պետք է հաշվետու լինեն այդ միջոցների օգտագործման համար: Մա ենթադրում է, որ հասարակական կազմակերպությունները պետք է ողջամտորեն հաշվետվություններ ներկայացնեն իրենց կողմից ստացված և ծախսված գումարների վերաբերյալ: Այնուամենայնիվ, նման հաշվետվություններ ներկայացնելու պահանջը չպետք է անհարկի բեռ դնի կազմակերպությունների վրա՝ ներկայացնելու ծախսերի և գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ¹⁸:
13. Օբյեկտիվության ապահովման տեսակյունից հնարավոր է, որ կազմակերպությունների գործունեության աուդիտի պահանջ առաջադրվի: Նման պահանջի ծավալները՝ հաճախականությունը, իրականացնող մարմնի նկատմամբ առաջադրված պահանջը, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնի կազմակերպության գործունեության մասշտաբները: Գործունեության ավելի փոքր մասշտաբներ ունեցող կազմակերպությունների դեպքում ընդունելի է, որ աուդիտի իրականցումը վստահվի կազմակերպության վերստուգիչ մարմնին, եթե կա այդպիսին, իսկ ավելի մեծ մասշտաբի գործունեություն դեպքում կարող է հրավիրվել նաև մասնագիտացված կազմակերպություն: Այնուամենայնիվ, սա չի կարող որպես պարտադիր պահանջ սահմանվել, առավել ևս, երբ նման պահանջը հավասարապես վերաբերելի չէ իրավաբանական գրանցում ունեցող այլ կազմակերպություններին¹⁹:
Անկախ վերահսկողության և կարգավորման ձևից, առանցքային է այն, որ վերահսկողությունը հիմնված լինի օբյեկտիվության և համաչափության սկզբունքի վրա: Մա ենթադրում է, որ.
 1. վերահսկողությունը հավասարապես կիրառելի լինի բոլոր կազմակերպությունների նկատմամբ: Մա ենթադրում է նաև այլ իրավաբանական անձնանց գործունեության վերահսկողության համանման մեխանիզմների կիրառելիություն:

¹⁶ Բացատրական գեկուցագիր CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Պարագրաֆ 47, կետ 93-94

¹⁷ Սույն ձևակերպմամբ հանրային ֆինանսական աջակցությունը վերաբերում է կազմակերպության կողմից անհատներից, միջազգային և տեղական ֆոնդերից, պետությունից ստացած դրամական միջոցներին և դրամաշնորհներին

¹⁸ Բացատրական գեկուցագիր CM/Rec(2007)14, Հանձնարարական Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներին Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ: Պարագրաֆ 62, Հոդված 114

¹⁹ Նույն տեղում



2. վերահսկողության մեխանիզմների կիրառվեն բացառապես այն դեպքերում, երբ ողջամիտ կասկած է առաջացել կազմակերպության անօրինական գործունեության կապակցությամբ²⁰:

14. Կազմակերպության ֆինանսական և բովանդակային գործունեության կապակցությամբ հաշվետվությունների ներկայացման ուսուումնասիրության իրականացումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դրա համար առկա են բավարար հիմքեր: Մասնավորապես՝ եթե կազմակերպությունը չի ներկայացրել համապատասխան հաշվետվություն կամ ներկայացված հաշվետվությունը լուրջ մտահոգություններ է առաջացրել: Կասկածանքի հիման վրա ուսումնասիրության իրականացումն անթույլատրելի է և պետք է առկա լինեն ողջամիտ հիմնավորումներ²¹: Պետության կողմից իրականացվող քաղաքականության արդյունքում չպետք է անհարկի կամ ոչ համաչափ բեռ դրվի հասարակական կազմակերպությունների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար:

15. Ընդհանուր առմամբ, պետություններն իրավասու են վերահսկելու, որ միություն/կազմակերպությունների գործունեության նպատակներն ու գործողությունները համապատասխանեն ներպետական օրենքերին ու իրավական կարգավորումներին: Այնուամենայնիվ, օրենսդրական այդ վերահսկողությունը պետք է իրականացվի բացառապես պետության կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների և Կոնվենցիոն մարմինների վերանայումներին համապատասխան²²: Այսինքն՝ այն պետք է լինի համաչափ և հետապնդի իրավաչափ նպատակ:

16. Պետության կողմից միավորումների ազատության վերահսկողության համաչափությանը, միջամտության հարցին անդրադառնալիս գնահատումն իրականացվում է ոչ թե ներպետական օրենսդրական կարգավորումների հիման վրա, այլ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի տրամաբանության ներքո: Ընդհանուր առմամբ գնահատվում են պետության կողմից իրականացված միջոցառումները՝ սահմանելու, թե արդյոք դրանք “վերաբերելի են և բավարար” և թե արդյոք “դրանք հետապնդում են իրավաչափ նպատակ”²³: Մա ենթադրում է, որ պետության կողմից պետք է հստակ ներկայացվի այն սուր սոցիալական պահանջի, որը ենթակա է պաշտպանության միավորումների ազատության սահմանափակման/միջամտության հաշվին և որ դա միակ միջոցն է սուր սոցիալական պահանջի պաշտպանությունն ապահովելու համար:

²⁰ Նույն տեղում

²¹ Նույն տեղում, Պարագրաֆ 68, հոդված 122

²² Case of Koretsky and others v. Ukraine, Application no. 40269/02, 3 April 2007, կետ 38

²³ Case of Sindicatul “Pastorul Cel Bun” v. Romania, Application no. 2330/09, 31 January 2012, կետ 70



17. Ներկայացված կարգավորումների շրջանակներում ազմակերպությունների գործունեության դադարեցման պահանջը՝ լուծարումը, օրենքի կամ կանոնադրությանը համապատասխան գործունեություն չիրականացնելու հիմքով համարվում է թույլատրելի²⁴: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ Կոնվենցիայի 8-րդ և 11-րդ հոդվածների կապակցությամբ “օրենքին համապատասխան” արտահայտությունների մեկնաբանությունների համաձայն՝ կարգավորումները պետք է ոչ թե բացառապես սահմանված լինեն օրենքով, այլ համապատասխանեն օրենքի որակական հատկանիշներին²⁵, ինչը, այլ պահանջների հետ համատեղ ենթադրում է. 1) Կանխատեսելիություն՝ օրենքի կիրառման հետևանքների մասով, 2) Հասանելիություն՝ մատչելիություն իր լեզվական և ֆիզիկական հասանելիության մասով, 3) հստակություն՝ օրենքը չպետք է տարամեկնաբանությունների, ենթադրությունների տեղիք տա, չպետք է պարունակի ոչ պարզ, անհստակ ձևակերպումներ: Որպեսզի ներպետական օրենքը համապատասխանի այս չափանիշներին, այն պետք է հիմնված լինի իրավունքի գերակայության սկզբունքի վրա, ինչը ենթադրում է, որ օրենքը պետք է պաշտպանի մարդու արժանապատվությունը, իրավունքներն ու հիմնարար ազատությունները պետության կամայական միջամտությունից²⁶:

VI. Հասարակական կազմակերպությունների գործունեության վերահսկողության մեխանիզմները և ծավալները ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում

18. “Պետական կառավարչական հիմնարկների մասին” ՀՀ օրենքի համաձայն՝ հիմնարկն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է համապատասխան պետական մարմնին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն²⁷:

Այս տեսանկյունից ՀՀ Արդարադատության նախարարությունն օժտված չէ կազմակերպությունների գործունեության նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ²⁸:

²⁴ Case of Tebieti Muhafize Cemiyeti and Israfilov v. Azerbaijan, Application no. 37083/03, 8 October, 2009, կետ 40-41

²⁵ Case of Maestry v. Italy, Application no. 39748/98, 17 February 2004, կետ 30

²⁶ Տես նույն տեղում

²⁷ “Պետական կառավարչական հիմնարկների մասին” ՀՀ օրենք, Հոդված 5

²⁸ Հայաստանի Հանրապետության Կառավարություն որոշում 28 նոյեմբերի 2002 թվականի n 1917-ն "Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ" պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու



19. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը (այդ թվում նաև համապատասխան հաշվետվությունների ստացման միջոցով) հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության գործառույթը²⁹:
20. Արդյունավետ կառավարման սկզբունքներին համապատասխան՝ պետական կառավարման (հանրային կառավարման մարմինները) չպետք է ֆիզիկական կամ իրավաբանական անձնանց համար լրացուցիչ բեռ կամ պարտավորություն ստեղծեն արդեն իսկ իրենց հասանելի տեղեկատվության տրամադրման կամ հրապարակման համար³⁰:
21. Ի կատարումն պետական կառավարչական հիմնարկների գործառույթների իրականացման գործող ներպետական օրենսդրությամբ ³¹՝ սահմանվում է ընդհանուր նշանակության տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու կարգը: Օրենսդրական այս կարգավորումներն առանց վերապահումների տարածվում են նաև հասարակական կազմակերպությունների գործունեության վրա, և վերջիններս իրենց կողմից իրականացվող ֆինանսական գործարքների, վճարումների վերաբերյալ՝ անկախ գումարի չափից, իրականացնում են ֆինանսական հաշվառում և ներկայացնում են համապատասխան հաշվետվություններ: Այդ հաշվետվությունները ներառում են տեղեկություններ՝
- աշխատողների,
 - վերջիններիս պաշտոնի,
 - աշխատանքի նկարագրության,
 - աշխատանքի ժամկետների,
 - վարձատրության չափի և այլ ֆինանսական գործարքների մասին:

Հարկային տեսչության կողմից տնօրինվող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական կարգով հավաքագրվում և համակարգվում է էլեկտրոնային բազայում ³²: Այս բազան մանրամասն տեղեկություններ է պարունակում կազմակերպության կողմից իրականացված ֆինանսական ծախսերի և դրանց համապատասխան հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ, ներառյալ ստացված եկամուտները,

մասին
 Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը եվ
 աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին”, Հոդված 2

²⁹ Հայաստանի Հանրապետության Կառավարություն որոշում 15 մայիսի 2008 թվականի n 503-ն, “Հայաստանի Հանրապետության ֆինանսների Նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի n 1460-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին”, Բաժին II

³⁰ SIGMA Papers No.27, European Principles for Public Administration, OECD, CCNM/SIGMA/PUMA(99)44/REV1

³¹ “Հաշվապահական հաշվառման մասին” ՀՀ օրենք, Հոդված 1

³² Հայաստանի Հանրապետության Հարկային Ծառայություն, Հարկային հաշվետվություն,
<http://www.taxservice.am/Content.aspx?itn=TTaxReport&pt=parent>



իրականացված ծախսերը, դրանց իրավական հիմնավորումները (համապատասխան պայամանգրի համար, հաշիվ ապրանքագիր, իրականացված ծախսի նպատակը և այլն): Տնտեսվարող սուբյեկտների կողմից համապատասխան տեղեկատվությունը բազայում ներկայացվում է ամսական կտրվածքով, որտեղ արտացոլվում են նաև իրականացված փոփոխությունները: Հաշվետվությունների ուշացման կամ սխալ տեղեկատվության ներկայացման դեպքերն անմիջապես արձանագրվում են բազայում, և հարկային տեսչության կողմից համարժեք պատասխանատվության կիրառման հիմք կարող են հանդիսանալ:

22. “Հաշվապահական հաշվառման մասին” ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանվում է ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման և աուդիտի իրականացման կարգը: Այս օրենքի համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունները պարտադիր հրապարակման ենթակա են բացառապես խոշոր կազմակերպությունների համար, որոնց գործունեության հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը³³: Նույն օրենքի համաձայն՝ միայն խոշոր կազմակերպությունները, այսինքն՝ առնվազն տարեկան մեկ միլիարդ դրամ ակտիվային հաշվեկշիռ ունեցող կազմակերպությունների գործունեությունն է ենթակա պարտադիր տարեկան աուդիտի և աուդիտի հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների հետ մեկտեղ ենթակա են պարտադիր հրապարակման³⁴:
23. “Ներքին աուդիտի մասին” ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպությունների համար օրենսդրությամբ սահմանվում է ներքին աուդիտի ինստիտուտը: Այն տարածվում է պետության կամ համայնքային հիմնարկների, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցության կազմակերպությունների գործունեության վրա³⁵: Ներքին աուդիտը նպատակ է հետապնդում առաջարկություններ ներկայացնել կազմակերպության գործունեության բարելավելու վերաբերյալ³⁶:
- Հատկանշական է, որ այս մարմինների ներքին աուդիտի հաշվետվությունները պարտադիր հրապարակման ենթակա չեն, և դրանք տվյալ կազմակերպության համար բացասական հետևանքներ և պատասխանատվություն չեն կարող առաջացնել³⁷:
24. “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքի համաձայն՝ արդեն իսկ սահմանված է պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում ստուգումներ իրականացնելու նպատակը: Այս օրենքի համաձայն՝

³³ “Հաշվապահական հաշվառման մասին” ՀՀ օրենք, Հոդված 24. 1.1. կետ

³⁴ Նույն տեղում, կետ 2

³⁵ “Ներքին աուդիտի մասին” ՀՀ օրենք, Հոդված 2

³⁶ Նույն տեղում, Հոդված 6

³⁷ Նույն տեղում, Հոդված 12, կետ 2



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

ստուգումներն իրականացվում են ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունը և օրենքի, այլ իրավական ակտերի կատարման պահանջների կատարման փաստացի իրավիճակը պարզելու նպատակով³⁸: Ընդ որում, օրենքը նախատեսում է հիմնականում ռիսկի վրա հիմնված ստուգումներ, ինչը ենթադրում է, որ ստուգող մարմնի մոտ պետք է առկա լինի ողջամիտ կասկած և հավանականություն, որ կազմակերպության գործունեության արդյունքում կարող է վնաս հասցվել մարդու կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին, պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային շահերին, և այդ վնասը պետք է ունենա ծանրության որոշակի աստիճան³⁹: Ըստ այդմ, սահմանվում են բարձր, միջին և ցածր ռիսկայնության սուբյեկտներ:

³⁸ “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենք, Հոդված 3

³⁹ Նույն տեղում, Հոդված 2



VII. Եզրակացություններ

25. Սույն փաստաթղթի 1-28-ը ներկայացված սկզբունքները և ներպետական գործող օրենսդրական կարգավորումները տարածելով Օրենքի առաջարկվող փոփոխությունների 17-րդ, 23-րդ, 25-րդ և 26-րդ հոդվածների վրա, *կարծում ենք*, որ “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքի առաջարկվող նախագիծը հակասում է ոչ միայն քաղաքացիական օրենսդրությամբ իրավաբանական անձանց, այդ թվում նաև առևտրային կազմակերպությունների, լիակատար ընկերակցությունների (տես ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Գլու 2, Գլուխ 3-ը) սահմանված կարգավորումներին, այլև հանդիսանում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված ազատության միջամտություն: Մասնավորապես՝ Կազմակերպության ներքին կառավարման և ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ պարտադիր կանոնների սահմանումը ընդունվելու դեպքում կհանգեցնի Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտմանը:
26. Գործող օրենսդրության կարգավորումները և վերահսկողության համակարգը վկայում է, որ կիրառվող օրենսդրության շրջանակներում հասարակական կազմակերպությունների ֆինանսական գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունն արդեն իսկ արդյունավետորեն ապահովված է: Պետության կողմից, հանձինս Հարկային տեսչության, ապահովվում է ֆինանսական գործունեության հաշվետվողականությունն և վերահսկողությունը՝ միասնական կարգի կիրառումամբ:
27. Բացի այդ, առանձին օրենսդրական կարգավորումներ, որպես բացառություն, հստակ սահմանում են այն կազմակերպությունների տեսակները, որոնք ենթակա են պարտադիր ֆինանսական աուդիտի: Նույն տրամաբանությամբ, վերջիններիս գործունեության առանձնահատկություններով պայմանավորված, սահմանվում են նաև նրանց նկատմամբ լրացուցիչ վերահսկողության կամ ստուգումների ծավալներն ու կարգը: Հասարակական կազմակերպությունների գործունեությունը սահմանված բացառությունների մեջ չի մտնում գործունեության բնույթից ելնելով, և օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով վերահսկողության ենթակա է ավելի պարզեցված կարգով:
28. Այս առումով, անհասկանալի է, թե ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման և հասարակական կազմակերպությունների ֆինանսական գործունեության նկատմամբ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից լրացուցիչ վերահսկողության սահմանումը իրավաչափ ինչ նպատակ է հետապնդում: Առավել ևս, երբ գործող օրենսդրական կարգավորումներով իրավաբանական այլ անձանց, այդ թվում նաև առևտրային,



ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար նմանատիպ լրացուցիչ վերահսկողության պահանջներ չեն կիրառվում:

29. Ավելին՝ գործող օրենսդրական կարգավորումների և առաջարկվող օրենսդրական փոփոխությունների համադրումը վկայում է, որ հասարակական կազմակերպությունների նկատմամբ պարտադիր աուդիտի անցկացման և ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջը վերջիններիս կարող է ենթարկել է չարդարացված կրկնակի հաշվետվողականության և կարող է հանգեցնել պետության կողմից հասարակական կազմակերպությունների նկատմամբ չհիմնավորված խտրական վերաբերմունքի:
30. Ինչպես երևում է Օրենքի նախագծի համար ներկայացված հիմնավորումներից, այն չի ապահովում միավորումների ազատության իրավունքի միջամտություն/սահմանափակումը պետության կողմից: Այս պարագայում, օրենքի առաջարկվող նախագծի հիմնավորումները ողջամիտ և բավարար չեն համոզելու, որ հասարակական կազմակերպությունների խորհրդի նիստերին արդարադատության նախարարության ներկայացուցիչների մասնակցության, կառավարման մարմինների որոշումների պատճենների կամ այլ փաստաթղթերի տրամադրման օրենսդրական կարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ: Առավել ևս, երբ բացակայում է հիմնավորումը, թե ինչպիսի սուր սոցիալական պահանջի պաշտպանություն է ապահովվելու նման կարգավորումը և այն, որ նման կարգավորումն այն միակ և ամենավերջին միջոցն է, որը հնարավորություն կտա արդյունավետորեն իրականացնել սուր սոցիալական պահանջի պաշտպանությունը: Առավել ևս այն դեպքում, երբ գործող օրենսդրության շրջանակներում համապատասխան պետական կառավարչական լիազորություն ունեցող այլ մարմիններն արդեն իսկ օժտված են կազմակերպությունների գործունեության արդյունավետ վերահսկողության և հնարավոր չարաշահումների բացահայտման լիազորություններով:
31. Նեկայացված օրենքի նախագիծը հստակ սահմանում է հասարակական կազմակերպությունների կառավարման պարտադիր ձև (տես սույն փաստաթղթի Նախապատմություն բաժինը) և որպես բարձրագույն մարմին՝ սահմանում Ժողովի պարտադիր գործունեությունը: Ավելին՝ Օրենքի նախագիծը պարտավորեցնում է նաև սահմանել Ժողովի գործունեության կարգը և գումարման ժամկետները: Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով հերթական Ժողովների գումարման համար սահմանվում է ոչ ուշ, քան 5 տարվա պարբերականություն, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է Ժողովներ գումարելու տարեկան պարտականություն: Ժողովի տարեկան գումարման պահանջը պարտադիր է, քանի որ առանց վերջինիս հաստատման կազմակերպությունը չի կարող գործունեության վերաբերյալ հաշվետվությունները հրապարակել:



32. Չնայած հաշվետվությունների պարտադիր հրապարակման պարտականությունը մատնանշվում է միայն Օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնելու պարտականություն ունեցող կազմակերպությունների վրա, այնուամենայնիվ, Օրենքում բացակայում է նման կազմակերպությունների տարբերակումը և հետևաբար այդ դրույթը տարածվում է բոլոր հասարակական կազմակերպությունների վրա ընդհանուր կարգով:

Այս առումով, Օրենքը հակասում է ոչ միայն հասարակական կազմակերպությունների գործունեության համար սահմանված միջազգային ստանդարտներին, այլև Օրենքի շրջանակներում սահմանված սկզբունքներին, որով կամակերպություններին վերապահվում է կազմակերպման կառուցվածքի սահմանման ինքնուրույնություն⁴⁰:

33. Հանձինս կազմակերպությունների կառավարման կարգի, գործունեության վերաբերյալ հաշվետվությունների, պարտադիր աուդիտի անցկացման պահանջի, Օրենքն անհամաչափ և ոչ իրավաչափ միջամտություն է նախատեսում հասարակական կազմակերպությունների գործունեությանը: Օրենքի փոփոխությունները հնարավորություն են ընձեռում այդ նույն օրենքի երկու երկու կամ ավելի խախտումների դեպքում դիմել դատարան՝ Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջով: Այս առումով, նման կարգավորումը հանդիսանում է միավորումների ազատության իրավունքի ուղղակի խախտում:

⁴⁰ Օրենքի նախագիծ, Հոդված 2, մաս 3